



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2016

ՏԵՐՈՒՄԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ ՂԳ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուած յաիպենական, բարերար եւ ամենակալ,
սրեղծող լոյսին եւ յօրինող գիշերին.
մահուան մէջ կեանք եւ խաւարին մէջ լոյս եւ Դուն.
ակնկալողներուն յոյսը եւ շուարածներուն երկայնամտութիւնը.
Քու ամենահնար իմաստութեամբդ առաւօրի կը փոխես մահուան սպուերները,
ո՛վ աննուաղ ծագումի եւ անմուտ արեգակ.
որովհետեւ գիշերին խաւարը չի կրնար ծածկել Քու տրեութեանդ փառքը:
Դուն կը լսես կապուածներու հեծութիւնը եւ կը նայիս խոնարհներուն աղօթքին,
եւ կ'ընդունիս անոնց խնդրուածքը, Աստուածս եւ Թագաւորս, կեանքս եւ ապաւենս,
յոյսս եւ վստահութիւնս, Յիսուս Քրիստոս, ամենուն Աստուածը.
ո՛վ սուրբերուն հոգիին մէջ հանգչող Սուրբ,
վիշտերու մխիթարութիւն եւ մեղաւորներուն քաւարան,
որ գիտես ամէն բան՝ անոնց ըլլալէն ալ առաջ:
Թող Քու աջդ մեր վրայ մնայ, որովհետեւ Դուն գրած եւ ողորմած ես,
ու Քու անունովդ կոչուած են Քու բոլոր ծառաներդ:
Փառք եւ իշխանութիւն Քեզի, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ,
յաիպեանս յաիպենից: Ամէն:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՐՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԿՆ ՆԻԺԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 3:1-11



Այս հատուածը կը ներկայացնէ ե՛րբ, ո՛ր եւ ինչպէ՛ս փոնարել Քրիստոսը: Հետաքրքրականօրէն երբ այս հատուածը կը համեմատենք, մանաւանդ երբ առաջին փողերը կը կարդանք ուր կ'ըսէ. «Փնտրեցի բայց չգտայ», իդարերք կիներուն հետ, երբ անոնք եւս երրորդ օրը գացին գերեզման փնտրեցին զԻնք բայց չգտան: Այս հրեշտակը հարցուց անոնց, որո՞ւ կը փնտրէք: Մանաւանդ ինչո՞ւ կենդանին մեռելներուն մէջ կը փնտրէք: Տակաւին, երբ առիթով մը Քրիստոս կը խօսէր իր առաքեալներուն Աստուծոյ թագաւորութեան մասին, եւ աշակերտները հարց փոխին, ո՞ր է: Քրիստոս կը պատասխանէ, ինչո՞ւ հոս ու հոն կը փնտրէք, ձեր ներսիդին փնտրեցէք: Նոյնպէս ալ այս հատուածի ճամբով այսօր մենք ո՞ր կը փնտրենք Քրիստոսը: Քրիստոսը կարելի է փնտրել մեր հոգիներուն մէջ: Այնպէս ինչպէս գրուած է եւ Աստուած հոգի է ու միայն հոգիներու մէջ կը բնակի: Հոն է միակ տեղը, ուր ոչ ոք կրնայ գողնալ կամ յափշտակել: Անոր համար է որ Քրիստոս կը թելադրէր ձեր զանձերը դիզեցէք հոն ուր ո՛չ ցեցը, ո՛չ ալ գողը կրնայ մօտենալ:

«Ո՛վ է ասիկա, որ գնուռսով եւ կնդրուկով կու գայ»: Այստեղ եւս խորհրդանիշ եղող այս արտայայտութիւնը կը յիշեցնէ մոգերու այցը Քրիստոսի ծնունդին, երբ իրենց հետ բերին՝ ոսկի, կնդրուկ եւ գնուռ, որոնք խորհրդանիշ էին Քրիստոսի թագաւորութեան, քահանայութեան, ու անոր պատարագումին եւ թաղման: Հոս եւս գնուռը կը խորհրդանշէ Փեսային՝ Քրիստոսի թաղումը, բայց միեւնոյն ժամանակ կնդրուկով խառնուած կը խորհրդանշէ Անոր աստուածային բնութիւնը:

«Ահա Սողոմոնին գահոյքը, որուն բոլորփիքը Իսրայելի վաթսուն սպառազէն քաջեր կան կանգնած, բոլորն ալ սուրերով գիշերային արհաւիրքին համար»:

Հետաքրքրականօրէն, ինչպէս նախապէս յիշուեցաւ, որ այստեղ Սողոմոնը նոյնինքն Քրիստոսն է, որովհետեւ Սողոմոն կը նշանակէ խաղաղութիւն: Երկրորդ, Սողոմոն ինք եղաւ Աստուծոյ փաճարը շինողը. «Ահա քեզի որդի մը պիտի ծնանի, անիկա հանգստութեան մարդ պիտի ըլլայ եւ զանիկա իր ամէն շրջակայ թշնամիներէն պիտի հանգչեցնեն. քանզի անոր անունը Սողոմոն պիտի ըլլայ ու անոր օրերուն մէջ Իսրայելի խաղաղութիւն եւ հանդարտութիւն պիտի փայլի: Անիկա ինծի փուն պիտի շինէ ու անիկա ինծի որդի պիտի ըլլայ ու ես անոր հայր պիտի ըլլամ եւ անոր թագաւորութեան աթոռը Իսրայելի մէջ յաւիտեան պիտի հաստատեմ» (Ա Մնացորդաց 22:9-10): Ահա այս խոստումը փրկուած նոյնինքն Քրիստոսի համար, որովհետեւ Քրիստոս ինք պիտի շինէր Աստուծոյ ճշմարիտ փաճարը, փաճար մը որ անձեռագործ է, այսինքն հաւատարմութեամբ խումբը, որուն մէջ պիտի բնակի Աստուած ինք:

Իսկ վաթսունը բազմապարկումն է 12 անգամ 5: 12-ը Իսրայելի ցեղերն են, իսկ 5-ը մեր գգայարանքները, որոնք պաշտպանուած Քրիստոսով պատրաստ ըլլալու գիշերուան արհաւիրքին, այսինքն գալիք փորձութիւններուն:

Սողոմոն իր գահը Լիբանանի մայրի փայտերէն շինեց, որ կը խորհրդանշէ չփարող, եւ փակաւին կարելի է անոր մէջ տեսնել Լիբանանը որպէս խորհրդանիշ հեթանոսութեան:

«Միոնի դուստրեր, ելէք եւ նայեցէք Սողոմոն արքային պսակին, թագին, որուն մայրը անոր հարսանիքի օրը, անոր ուրախութեան օրը պսակեց»: Հետաքրքրական արտայայտութիւն մըն է, որուն մէջ կարելի է տեսնել Քրիստոսի փառաւորումը, եւ այդ փառաւորումը իր իսկ խաչելութեան օրը, երբ փուշէ պսակը պիտի ըլլար այդ փառքի պսակը, երբ Քրիստոս ինք իսկ պիտի ըսէ. «Հայր, հասած է ժամանակը, փառաւորէ Քու Որդիդ» (Յովի 17:1):